ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը և 41-րդ հոդվածի 6-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի ապրիլի 28-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային առաջին հարցի վերաբերյալ՝

1) մինչև 15 րոպե տևողությամբ հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս վարչապետը կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարը.

2) հիմնական զեկուցողին և յուրաքանչյուր հարակից զեկուցողի՝

ա. հարցերի համար հատկացնել երկուական րոպե ժամանակ,

բ. հարցերին պատասխանելու համար հատկացնել երեքական րոպե ժամանակ,

գ. արձագանքելու համար հատկացնել մեկական րոպե ժամանակ.

3) մինչև վեցական րոպե տևողությամբ հարակից զեկուցումներով հանդես է գալիս՝

ա. գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը՝ հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար.

4) մտքերի փոխանակության ելույթների համար նախատեսել վեցական րոպե ժամանակ.

5) մտքերի փոխանակությունն ավարտվում է վարչապետի կամ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով.

6) մտքերի փոխանակությունն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում՝ առնվազն 7 ժամ.

7) նախագծի քննարկումն ընդմիջվելուց հետո նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկների և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ.

8) պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկումը վերսկսել սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով նախատեսված ժամկետը լրանալուց անմիջապես հետո.

9) հիմնական զեկուցողին նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացնելու համար հատկացնել 15 րոպե ժամանակ.

10) հիմնական զեկուցողին և յուրաքանչյուր հարակից զեկուցողի՝

ա. հարցերի համար հատկացնել երկուական րոպե ժամանակ,

բ. հարցերին պատասխանելու համար հատկացնել երեքական րոպե ժամանակ,

գ. արձագանքելու համար հատկացնել մեկական րոպե ժամանակ.

11) հայտ ներկայացնելու դեպքում վեցական րոպե տևողությամբ մեկական ելույթի իրավունք ունեն՝

ա. նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները,

բ. խմբակցությունների մեկական ներկայացուցիչ,

գ. գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչը,

դ. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները.

12) եզրափակիչ ելույթների համար նախատեսել 10 րոպե ժամանակ:

2. Կառավարության նախաձեռնությամբ 2020 թվականի ապրիլի 28-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային երկրորդ և երրորդ հարցերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրանց ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում: Նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները և գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, ապրիլի 28
Երևան

ԱԺՈ - 320 - Լ